ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2026 թվականի N 1619 - Ն

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը և 39-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) ֆիզիկական արհեստական բանականության ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ծրագրի իրականացման միջոցառումների և ժամանակացույցի ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ծրագրի արդյունքային ցուցանիշների և մշտադիտարկման շրջանակը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

ա. իր լիազորությունների շրջանակում ապահովել սույն որոշմամբ հաստատված ծրագրից և դրա հավելվածներից բխող միջոցառումների իրականացման համակարգումն ու վերահսկողությունը,

բ. սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել նախարարության ներկայացուցչի առաջադրումը՝ ծրագրի ռազմավարական ուղղությունների և բովանդակության ձևավորմանը մասնակցելու համար.

2) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արհեստական բանականության նախարարին՝

ա. սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել նախարարության ներկայացուցչի առաջադրումը՝ ծրագրի ռազմավարական ուղղությունների, բովանդակության և ֆինանսական առաջնահերթությունների ձևավորմանը մասնակցելու համար,

բ. նախատեսել ծրագրի իրականացման համար պետության կողմից հատկացված ֆինանսավորման շրջանակներում ծրագրի ֆինանսավորման կազմակերպումը,

գ. ապահովել ծրագրի բյուջետավորումը 2026-2033 թվականների համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ